

Թեանց միջոցին, մեր թերութիւնները՝ մանաւանդ կարգ մը վաճառական տուներու մասին մեր կարի՛ համառօտագրութիւններն ու մոռացումներն իսկ, գլխաւորապէս զաւառական շահաստաններու վրայ ժամանակին չհասան մեզի պէտք եղած տեղեկութիւնք, որով գաւառական մասը շատ քիչ բաժին ունեցաւ հոս։ Չէինք կըրնար՝ մեր բանասիրական քիչ մը երկարաշունչ աշխատութեանց միջոցին՝ հօ՛ս ալ ամէն բանի ընդարձակը, ամէնաճիշդն ու անթերին բովանդակել գործնական անամփոփելի յարաճուն ընդարձակութիւն ունեցող այս ճիւղին վրայ, զոր մէկ ձեռքով միայնակ պարագրել անհնար էր մեզի։ Ինչ որ մենք՝ գործնապէս ալ անձկացած հասարակութեան մը սիրուն՝ սկսանք համառօտակի, ուրիշ մը, մանաւանդ տուրեառի հրապարակի մէջ թարթափող և շահ ունեցող ուրիշ մը՝ կըրնայ այլևս աւելի դիւրութեամբ շարունակել լայնաբար գէթ իր և նմանեաց շահուն սիրուն։ Եւ օգուտը շատ գործնական կը թուի մեզի։

Եւ արդ՝ ձգելով յետահայեաց ակնարկ մը իբր հարիւր յիսուն տարուան թուրքահայ այս վաճառականաց վրայ՝ կը տեսնենք որ անոնց մեծագոյն մասը չէ կըրցած ունենալ տեական յաջողութիւն և յաջորդութիւն որդւոց որդի։ Ամէնէն մեծ տունն անգամ 50 տարին անցուցած չէ։

Այս կարճառօտ ընդհատումներու պատճառները կըրկին կերեխն. — Նախ արտաքին։ Եւ ասոնք են՝ յարաբերութեանց դժուարութիւնք, որ և տարուէ տարի դիւրանալու վրայ են՝ խճուղիներու, շոգեխաւերու, երկաթուղիներու, հեռագրութեանց, թղթատարութեանց և սահմանադրական ոգիին աճումով։ Նաև սովք, համաճարակք, երկրաշարժութիւնք և հրեհք։

Սովերու մէջ նշանաւոր եղած է 1829ի սովը, որ մանաւանդ Կ. Պոլիսի մէջ՝ բերաւ սաստիկ նուազութիւն